

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ
ՋԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ
ԿԵՆՏՐՈՆ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՑ

«10» 12 2005 թ.

Կազմակերպության նախագահ՝

Գ.ԽԱԶԱՏՐՅԱՆ

(ստորագրություն, կնիք)

ԳՐԱՆՑՎԱԾ Է

ՀՀ Արդարադատության նախարարի
«20» փետրվարի 2001 թ.
թիվ 211 հրամանով

ԳՐԱՆՑՎԱԾ Է

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ
ՌԵԳԻՍՏՐԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ
ԿՈՂՄԻՑ

«02» 02 2006 թ.

Գրանցման թիվ 211.171.03756

Վկայական 03Ա 071072

Պետական ռեգիստրի ղեկավար

Գ.ՍԱՐԳՍՅԱՆ

(ստորագրություն, կնիք)

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

**«ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ
ՋԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ
ԿԵՆՏՐՈՆ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ**

(նոր խմբագրությամբ)

2005 թ.

1. Ընդհանուր դրույթներ

«Տեղեկատվական համակարգերի զարգացման և վերապատրաստման կենտրոն» հասարակական կազմակերպությունը /այսուհետ՝ Կազմակերպություն/ շահույթ ստանալու նպատակ չհետապնդող և ստացված շահույթը մասնակիցների միջև չբաշխող (ոչ առևտրային), իր անդամների շահերի ընդհանրության հիման վրա, իրենց կրոնական հոգևոր կամ ոչ նյութական այլ պահանջները բավարարելու, իրենց և այլոց իրավունքներն ու շահերը պաշտպանելու, հասարակությունը, նրա առանձին խմբերին նյութական և աջակցություն ապահովելու, հանրօգուտ գործունեություն իրականացնելու նորմատիվներով ստեղծված հասարակական միավորման տեսակ է:

Կազմակերպության գտնվելու վայրն է՝ Հայաստանի Հանրապետություն, քաղաք Չարենցավան, Կ.Դեմիրճյանի հրապարակ, Քաղաքապետարան, սենյակ 309:

Կազմակերպության անվանումն է՝

հայերեն՝ «Տեղեկատվական համակարգերի զարգացման և վերապատրաստման կենտրոն» հասարակական կազմակերպություն (կրճատ անվանումն է «ՏՀԶՎԿ»),

անգլերեն՝ “Information Systems Development and Training Center” Non - Governmental Organization (կրճատ “ISDTC”),

ռուսերեն՝ Общественная организация “Центр переподготовки и развития информационных систем” (կրճատ “ЦПРИС”).

Կազմակերպությունն իր պետական գրանցման պահից ձեռք է բերում իրավաբանական անձի կարգավիճակ, ունի կնիք՝ խորհրդանիշով, դրոշմակնիք, խորհրդանիշ (*տես հավելվածը*), հաշվարկային հաշիվ բանկում՝ թե ՀՀ և թե օտարերկրյա արժույթով:

Կազմակերպությունը գործում է օրինականության, կամավորության, անդամների իրավահավասարության, ինքնակառավարման, անդամության կամավորության, ղեկավարման կոլեգիականության և հրապարակայնության սկզբունքներով:

Կազմակերպությունը չի հետապնդում քաղաքական նպատակներ:

Կազմակերպությունը գործում է Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում և օտարերկրյա պետություններում՝ այդ պետությունների օրենսդրությանը համապատասխան:

2. Կազմակերպության նպատակները և գործունեության առարկան

Կազմակերպության գործունեության նպատակներն են՝

- նպաստել ՀՀ համայնքներում իրականացվող տնտեսական, սոցիալական և կառուցվածքային բարեփոխումներին, ժողովրդավարական ավանդույթների հաստատման պրոցեսին՝ տեղեկատվական համակարգերի ներդրման, ավտոմատացված գործավարման, հաշվառման և արխիվների համակարգման խթանման միջոցով;
- աջակցել ՀՀ համայնքների համակարգչային ցանցերի գործարկման գործում ընդգրկված աշխատակազմի մասնագիտական կարողությունների, հմտությունների և աշխատանքային փորձի փոխանակմանը;
- նպաստել ՀՀ համայնքներում ավտոմատացված գործավարման շրջանակների ընդլայնմանը և ժամանակակից մեթոդների կիրարկմանը:

Կազմակերպության գործունեության առարկան է՝

- օժանդակել ՀՀ համայնքներում կազմակերպության կողմից ներդրված տեղեկատվական համակարգերի և համակարգչային ցանցերի անխափան աշխատանքի ապահովմանը;
- տրամադրել կազմակերպության տրամադրության տակ գտնվող միջոցներ, և կազմակերպել դասընթացներ կազմակերպության անդամ ՀՀ համայնքների մասնագետների որակավորումը բարձրացնելու նպատակով;
- տրամադրել և կիրարկել կազմակերպության տրամադրության տակ գտնվող անհրաժեշտ ստանդարտ փաթեթներ և ծրագրեր ցանցերի արդյունավետ և ժամանակակից մեթոդներին համահունչ աշխատանք ապահովելու նպատակով;
- առանձին համայնքի պատվերով կամ Կազմակերպության նախաձեռնությամբ նորացնել գործող ծրագրային միջոցները կամ ներդնել նորերը;
- մշակել և ստեղծել նոր տեղեկատվական համակարգեր;
- նպաստել կազմակերպության անդամների թվի մեծացմանը:

Իր նպատակների ու խնդիրների իրականացման համար կազմակերպությունը կարող է իրականացնել սույն կանոնադրությամբ չնախատեսված և ՀՀ օրենսդրությամբ նմանատիպ կազմակերպությունների համար չարգելված ցանկացած տիպի գործունեություն:

3. Կազմակերպության իրավունքները

Կազմակերպությունն ունի իրավաբանական անձի համար սահմանված բոլոր իրավունքները և կրում է համապատասխան պարտականություններ:

Կազմակերպությունը, իր կանոնադրությամբ նախատեսված նպատակներն իրականացնելու համար, օրենքով սահմանված կարգով իրավունք ունի՝

- 1) տեղեկատվություն տարածել իր գործունեության մասին,
- 2) օրենքով սահմանված կարգով ներկայացնել ու պաշտպանել իր եւ իր անդամների իրավունքները եւ օրինական շահերն այլ կազմակերպություններում, դատարանում, պետական կառավարման եւ տեղական ինքնակառավարման մարմիններում,
- 3) համագործակցել ոչ առետրային այլ կազմակերպությունների, այդ թվում՝ միջազգային եւ օտարերկրյա ոչ կառավարական ոչ առետրային կազմակերպությունների հետ, ինչպես նաեւ համակարգված գործունեություն ծավալելու, ընդհանուր շահեր ներկայացնելու եւ պաշտպանելու նպատակով այդ կազմակերպությունների հետ ստեղծել միություններ կամ անդամակցել նրանց ստեղծած միություններին՝ պահպանելով իր ինքնուրույնությունը եւ իրավաբանական անձի կարգավիճակը,
- 4) սույն կանոնադրությամբ սահմանված կարգով ստեղծել առանձնացված ստորաբաժանումներ՝ մասնաճյուղեր եւ ներկայացուցչություններ, ինչպես նաեւ հիմնարկներ,
- 5) ստեղծել առետրային կազմակերպություններ կամ մասնակից դառնալ այդպիսի կազմակերպություններին,
- 6) օրենսդրությամբ սահմանված կարգով ձեռք բերել, ստանալ կամ այլ պայմաներով, այդ թվում նաև անվճար, օգտագործել անշարժ գույք, հիմնական միջոցներ, տրանսպորտ, օրենքով չարգելված այլ գույք,
- 7) կնքել օրենսդրությամբ չարգելված պայմանագրեր և գործարքներ,
- 8) օտարել, կամ վաճակալության և օգտագործման հանձնել, կազմակերպությանը պատկանող ցանկացած անշարժ գույք,
- 9) ինքնուրույն կազմավորել իր ֆինանսական ռեսուրսները, այդ թվում փոխառու միջոցների ներգրավմամբ, Հայաստանի Հանրապետությունում և այլ պետություններում ստանալ վարկեր, դրամաշնորհներ՝ այդ թվում արտարժույթով,
- 10) իրականացնել ինքնուրույն արտաքին գործունեություն, իր անդամներին գործուղել արտասահմանյան երկրներ, հրավիրել այլ երկրներից քաղաքացիներ,
- 11) կազակերպել մրցաշարեր, ուսուցողական սեմինարներ և գիտաժողովներ՝ այդ թվում նաև միջազգային,
- 12) հիմնադրել լրատվության միջոցներ:

Կազմակերպությունն իրավունք ունի իրականացնել սույն կանոնադրությանը չհակասող և օրենքով չարգելված այլ գործունեություն:

4. Կազմակերպության պարտականությունները և պատասխանատվությունը

Կազմակերպությունը պարտավոր է՝

- 1) ցանկացած ֆիզիկական անձի պահանջով՝ ողջամիտ ժամկետում, բայց ոչ ավելի, քան 7 օրացուցային օրվա ընթացքում, նրան հնարավորություն տալ ծանոթանալու կազմակերպության կանոնադրությանը,
- 2) օրենքով սահմանված կարգով վարել գործավարություն եւ հաշվապահական հաշվառում,
- 3) վարել իր անդամների հաշվառումը,
- 4) իր գործունեության եւ գույքի օգտագործման հաշվետվությունները ներկայացնել կազմակերպության ընդհանուր ժողովի հաստատմանը ոչ պակաս, քան երկու տարին մեկ անգամ՝ ապահովելով այդ հաշվետվությունների հրապարակայնորեն մատչելի լինելը,
- 5) օրենքով նախատեսված դեպքերում եւ կարգով տեղեկատվություն ու հաշվետվություններ ներկայացնել պետական մարմիններ,

6) Հայաստանի Հանրապետության արդարադատության բնագավառի պետական կառավարման լիազորված մարմնի (այսուհետ՝ պետական լիազորված մարմին) պատճառաբանված պահանջով ողջամիտ ժամկետում նրան տրամադրել կազմակերպության ընդհանուր ժողովի եւ նյութ մարմինների որոշումների պատճենները, կազմակերպության գործունեության մասին այլ փաստաթղթեր, թույլատրել այդ մարմնի ներկայացուցիչներին՝ ներկա գտնվելու կազմակերպության ժողովին,

7) առանձնացված ստորաբաժանում կամ հիմնարկ ստեղծելու եւ կազմալուծելու մասին որոշումներ ընդունելուց հետո՝ մեկամսյա ժամկետում, դիմել պետական գրանցման մարմին՝ սահմանված կարգով դրանք հաշվառելու եւ հաշվառումից հանելու համար,

8) առանց լիազորագրի կազմակերպությունը ներկայացնելու իրավունք ունեցող պաշտոնատար անձի եւ (կամ) կազմակերպության գտնվելու վայրի հասցեի փոփոխման դեպքում, 14 օրացուցային օրվա ընթացքում, պետական գրանցման մարմին ուղարկել այդ անձի անձնագրային տվյալները եւ (կամ) կազմակերպության գտնվելու վայրի նոր հասցեի մասին տեղեկությունները:

Օրենքով կարող են նախատեսվել կազմակերպության նաեւ այլ պարտականություններ:

Անօրինական գործունեություն ծավալելու համար կազմակերպությունն ու նրա պաշտոնատար անձինք կրում են օրենքով նախատեսված պատասխանատվություն:

Կազմակերպությունն իր պարտավորությունների համար պատասխանատվություն է կրում իրեն պատկանող գույքով՝ օրենքով սահմանված կարգով:

Կազմակերպությունը պատասխանատվություն չի կրում պետության պարտավորությունների համար, ինչպես որ պետությունը պատասխանատվություն չի կրում Կազմակերպության պարտավորությունների համար:

Կազմակերպությունը պատասխանատվություն չի կրում իր անդամների պարտավորությունների համար, ինչպես որ վերջիններս պատասխանատվություն չեն կրում կազմակերպության պարտավորությունների համար: Եթե Կազմակերպությունն իր անօրինական գործունեությամբ վնաս է հասցրել ֆիզիկական կամ իրավաբանական անձանց, պարտավոր է այն հատուցել իր գույքի հաշվին՝ օրենքով սահմանված կարգով:

Պետությունը ապահովում է Կազմակերպության իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը: Պետական մարմինների և պաշտոնական անձանց կողմից Կազմակերպության գործունեությանը միջամտելն արգելվում է, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի:

Կազմակերպությանը հասցված վնասը, որը հետեվանք է պետական կամ այլ մարմինների, կամ նրանց պաշտոնատար անձանց կողմից Կազմակերպության իրավունքների խախտման, ՀՀ օրենսդրությամբ սահմանված պարտավորությունների ոչ պատշաճ կատարման, ենթակա է փոխհատուցման այդ մարմինների կողմից՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5. Կազմակերպության անդամները, կազմակերպության անդամագրվելու և դուրս գալու կարգը

Կազմակերպության անդամ կարող են դառնալ Հայաստանի Հանրապետության համայնքապետարանների տեղեկատվական համակարգեր սպասարկող ստորաբաժանումների ղեկավարները, ինչպես նաև տվյալ համայնքապետարանների այն պաշտոնյաներն ու մասնագետները, ովքեր ընդունում են Կազմակերպության կանոնադրությունը և ցանկնում են մասնակցել նրա աշխատանքներին:

Կազմակերպության անդամ դառնալ ցանկացող համայնքի ներկայացուցիչ անձը պետք է գրավոր դիմում ներկայացի Կազմակերպության խորհրդին՝ կազմակերպության նախագահի անունով:

Կազմակերպության անդամակցելու հարցը լուծում է կազմակերպության խորհուրդը, եթե տվյալ անձը բավարարում է սույն կանոնադրության 5.1 կետի պահանջներին: Կազմակերպության անդամության մասին դիմումը պետք է հաստատվի ոչ ուշ քան 1 ամսվա ընթացքում: Անդամ դառնալու վերաբերյալ դիմումը մերժելու որոշումը պետք է պարունակի մերժման պատճառները:

Կազմակերպության անդամը մուծում է անդամավճար: Անդամավճարի չափը և վճարման կարգը սահմանում է կազմակերպության Ընդհանուր ժողովը:

Կազմակերպության անդամը կարող է դուրս գալ անդամակցությունից, գրավոր դիմում ներկայացնելով կազմակերպության խորհրդին:

Սույն կանոնադրությունը խախտելու կամ կազմակերպության խնդիրներին և նպատակներին հակասող գործունեություն իրականացնելու դեպքում, ինչպես նաև, եթե անդամը դադարել է բավարարել սույն կանոնադրության 5.1 կետի համապատասխան պահանջներին, անդամությունը

կարող է դադարեցվել կազմակերպության խորհրդի որոշմամբ՝ գրավոր արձանագրությունը համայնքի ղեկավարին ներկայացնելուց հետո: Այդ որոշումը կարող է բողոքարկվել Ընդհանուր ժողովին:

Անձի անդամակցությունը կազմակերպությանը նրա իրավունքների եւ ազատությունների սահմանափակման հիմք չէ:

6. Կազմակերպության անդամների իրավունքները և պարտականությունները

Կազմակերպության ցանկացած անդամ իրավունք ունի՝

- ներկա գտնվել կազմակերպության Ընդհանուր ժողովին;
- մասնակցել Ընդհանուր ժողովի որոշումների ընդունմանը;
- ծանոթանալ կազմակերպության մարմինների աշխատանքի արձանագրման մասին փաստաթղթերին, ստանալ նրանց ընդունած որոշումների պատճենները (պատճենների տրամադրման համար գանձվող վճարը չի կարող գերազանցել դրանց պատրաստման համար անհրաժեշտ ծախսերը);
- Կազմակերպության մարմնի (այդ թվում՝ բարձրագույն մարմնի) որոշումը, որն ընդունվել է օրենքի, կազմակերպության կանոնադրության կամ վերադաս մարմինների որոշումներով սահմանված կարգի խախտմամբ կամ ոտնահարել է կազմակերպության կամ կազմակերպության անդամի իրավունքները եւ օրինական շահերը, կարող է դատական կարգով անվավեր ճանաչվել կազմակերպության անդամի դիմումի հիման վրա: Նման դիմում կարող է տրվել 60 օրվա ընթացքում՝ սկսած այն օրվանից, երբ կազմակերպության անդամն իմացել է կամ պարտավոր էր իմանալ այդպիսի որոշման ընդունման մասին, եթե օրենքով այլ բան սահմանված չէ;
- կազմակերպության մարմինների որոշումները բողոքարկել կազմակերպության վերադաս մարմիններ՝ կազմակերպության կանոնադրությամբ սահմանված կարգով;
- մասնակցել Կազմակերպության կողմից կազմակերպված միջոցառումներին;
- դիմումներ և առաջարկություններ ներկայացնել Կազմակերպության ղեկավար մարմիններին:

Կազմակերպության անդամները պարտավոր են՝

- կատարել կանոնադրությունից բխող պահանջները;
- մասնակցել Կազմակերպության Ընդհանուր ժողովին;
- մասնակցել Կազմակերպության նպատակների և խնդիրների իրականացմանը;
- բարեխղճորեն կատարել իրենց վրա դրված պարտականությունները;
- օժանդակել Կազմակերպության ղեկավար մարմիններին;
- կանոնավոր մուծել անդամավճարը (եթե դա սահմանված է);

7. Կազմակերպության կառուցվածքը, կառավարումը և բարձրագույն մարմինը

Կազմակերպությունն կառուցվածքը սահմանվում է սույն կանոնադրությամբ եւ (կամ) կանոնադրությանը համապատասխան՝ նրա մարմինների որոշումներով:

Կազմակերպությունը կառավարվում է իր մարմինների միջոցով, որոնք գործում են օրենքին եւ սույն կանոնադրությանը համապատասխան:

Կազմակերպության մարմիններն ստեղծվում են, եւ նրանց կազմը ձեւավորվում է օրենքով եւ սույն կանոնադրությամբ սահմանված կարգով:

Կազմակերպության բարձրագույն մարմինը **Ընդհանուր ժողովն** է, որն ունի Կազմակերպության գործունեությանն առնչվող ցանկացած հարցի վերջնական լուծման վերաբերյալ որոշում ընդունելու իրավունք: Կազմակերպության Ընդհանուր ժողովը կարող է լինել հերթական կամ արտահերթ:

Ընդհանուր ժողովն ընտրում է **Կազմակերպության նախագահ, Կազմակերպության խորհուրդ և Վերստուգիչ հանձնաժողով**, որոնք հաշվետու են Ընդհանուր ժողովին:

Ընդհանուր ժողովների միջև ընկած ժամանակաշրջանում Կազմակերպության ղեկավարումն իրականացնում է Կազմակերպության խորհուրդը:

8. Ընդհանուր ժողովը

Կազմակերպության հերթական Ընդհանուր ժողովը հրավիրվում է երկու տարին մեկ անգամ Կազմակերպության նախագահի կողմից՝ անդամների համատեղ հավաքի ձևով կամ հեռակա կարգով՝ հեռահաղորդակցության միջոցների օգտագործմամբ՝ կազմելով համապատասխան արձանագրություն կամ փոխանակելով փաստաթղթեր, որոնք հնարավորություն են տալիս ճշգրիտ որոշել, որ փաստաթուղթը ելնում է նրանում որպես հեղինակ նշված անձից: Ընդհանուր ժողովն ունի կառավարման, գործունեության ցանկացած հարցի վերջնական լուծման իրավունք:

Կազմակերպության Ընդհանուր ժողովի օրակարգի, նրա աշխատանքն սկսվելու տեղի, օրվա ու ժամի մասին Կազմակերպության անդամները ծանուցվում են պատվիրված նամակով կամ էլեկտրոնային հաղորդակցության միջոցներով՝ ոչ ուշ, քան ժողովի անցկացման օրվանից 14 օր առաջ:

Կազմակերպության անդամների մեկ երրորդի կամ կազմակերպության վերստուգիչ հանձնաժողովի պատճառաբանված պահանջի դեպքում, ոչ ուշ, քան 14 օրացուցային օրվա ընթացքում, հրավիրվում եւ տեղի է ունենում կազմակերպության արտահերթ ժողով, որի օրակարգի, անցկացման տեղի, օրվա ու ժամի մասին մասնակիցները պետք է ծանուցվեն հերթական ժողովի հրավիրման համար նախատեսված եղանակով՝ ոչ ուշ, քան այդ ժողովի անցկացման օրվանից 3 օր առաջ:

Կազմակերպության Ընդհանուր ժողովն իրավազոր է, եթե հրավիրվել է սույն կանոնադրությամբ սահմանված կարգով, եւ եթե մասնակիցների թիվն ավելի է բոլոր անդամների ընդհանուր թվի կեսից:

Կազմակերպության Ընդհանուր ժողովի ընթացքի արձանագրման փաստաթղթերը պահպանվում են 3 տարուց ոչ պակաս ժամկետում:

Կազմակերպության Ընդհանուր ժողովի բացառիկ իրավասությունն է՝

- ա) կազմակերպության կանոնադրության հաստատումը (եթե այն չի հաստատել հիմնադիրների ժողովը), նրանում փոփոխությունների եւ (կամ) լրացումների կատարումը կամ նոր կանոնադրության հաստատումը.
- բ) կազմակերպության գործունեության եւ գույքի օգտագործման հաշվետվությունների հաստատումը.
- գ) բացառապես կազմակերպության բարձրագույն մարմնին ենթակա եւ հաշվետու մարմինների (կազմակերպության խորհրդի և կազմակերպության նախագահի), այդ թվում՝ կազմակերպության գործունեության նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմնի (վերահսկիչ հանձնաճողով) ընտրությունը, այդ մարմինների կազմի փոփոխումը կամ լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը, ընդ որում, նրանց լիազորությունների ժամկետները չեն կարող սահմանվել ավելին, քան կազմակերպության հերթական ժողովի հրավիրման՝ կանոնադրությամբ սահմանված պարբերականությունն է.
- դ) կազմակերպության վերակազմակերպման մասին որոշման ընդունումը, գույքի փոխանցման ակտի կամ բաժանիչ հաշվեկշռի հաստատումը, բացի դատարանի վճռով վերակազմակերպումից.
- ե) կազմակերպության լուծարման մասին որոշման ընդունումը, բացի դատարանի վճռով լուծարումից.
- զ) այլ հարցերի լուծումը, եթե սույն կանոնադրությամբ նախատեսված է դրանց լուծումը բացառապես բարձրագույն մարմնի կողմից:

Կազմակերպության Ընդհանուր ժողովը չի կարող իր բացառիկ իրավասության հարցերի վերաբերյալ որոշում ընդունելու իրավունքը փոխանցել կազմակերպության այլ մարմնի:

Կազմակերպության Ընդհանուր ժողովը որոշումներ է ընդունում, եթե կողմ է քվեարկել ժողովին ներկա կազմակերպության անդամների թվի կեսից ավելին:

Կազմակերպության Ընդհանուր ժողովի բացառիկ իրավասության հարցի (բացառությամբ սույն կետի ա) և ե) ենթակետերով սահմանված հարցերի) վերաբերյալ որոշումն ընդունվում է, եթե կողմ է քվեարկել կազմակերպության բոլոր անդամների թվի կեսից ավելին:

Սույն կետի ա) և ե) ենթակետերով սահմանված հարցերի քննարկման ժամանակ որոշումներն ընդունվում են բոլոր անդամների երկու երրորդի մեծամասնությամբ:

Կազմակերպության գործունեության կամ կազմակերպության Ընդհանուր ժողովի ընթացքում օրենքով եւ սույն կանոնադրությամբ չկանոնակարգված իրադրություն առաջանալու դեպքում հարցերը լուծվում են կազմակերպության Ընդհանուր ժողովի որոշմամբ:

9. Կազմակերպության խորհուրդը

Կազմակերպության խորհուրդն ընտրվում է երկու տարի ժամկետով:

Կազմակերպության խորհրդի անդամներն ընտրվում են ընդհանուր ժողովի կողմից՝ նախապես ընդհանուր ժողովի մասնակիցների կողմից առաջադրված թեկնածուների ցուցակից:

Կազմակերպության նախագահը Կազմակերպության խորհրդի անդամ է:

Կազմակերպության խորհուրդն իր կազմից ընտրում է Կազմակերպության փոխնախագահ:

Կազմակերպության խորհրդի նիստերը հրավիրվում են առնվազն տարին երկու անգամ:

Կազմակերպության խորհրդի արտահերթ նիստ կարող է հրավիրվել Կազմակերպության նախագահի կամ Կազմակերպության խորհրդի անդամների երկու երրորդի պահանջով:

Կազմակերպության խորհուրդը կարող է հարցեր քննարկել և որոշումներ ընդունել, եթե ներկա են խորհրդի անդամների կեսից ավելին:

Կազմակերպության խորհրդի որոշումներն ընդունվում են, եթե կողմ են քվեարկել խորհրդի նիստին ներկա անդամների կեսից ավելին:

Կազմակերպության խորհրդի իրավասության հարցերն են՝

- կազմակերպության գործունեության վերաբերյալ որոշումների կայացումը;
- կազմակերպության անդամակցելու դիմումների քննարկումը և համապատասխան որոշումների ընդունումը;
- կազմակերպության անխափան գործունեության ապահովման և հետագա զարգացման նպատակով անհրաժեշտ միջոցների ձեռք բերման որոշումը և ֆինանսական միջոցների հատկացումը;
- առանձնացված ստորաբաժանումների ստեղծումը, լուծարումը, ինչպես նաև նրանց կանոնադրության հաստատումը;
- ընդհանուր ժողովին առաջարկների և հարցերի ներկայացումը՝ քննարկման և լուծման նպատակով;
- Կազմակերպության կառավարումը և վերջինիս գործունեության ուղղությունների վերաբերյալ ընդհանուր ժողովների միջև ընկած ժամանակաշրջանում որոշումների ընդունումը:

Կազմակերպության խորհրդի որևէ անդամի մահվան, հիվանդության պատճառով բացակայության կամ նրա պարտականությունների կատարումը անհնարին դարձնող այլ հանգամանքների առկայության դեպքում՝ Կազմակերպության խորհրդի աշխատանքը շարունակվում է առանց տվյալ անդամի: Եթե վերոհիշյալ պատճառով Կազմակերպության խորհրդի անդամները կազմում են զույգ թիվ, ապա կազմակերպության նախագահը ստանում է որոշիչ ձայնի իրավունք:

10. Կազմակերպության նախագահը

Կազմակերպության նախագահին երկու տարի ժամկետով ընտրում է ընդհանուր ժողովը:

Ընդհանուր ժողովների միջև ընկած ժամանակահատվածում Կազմակերպության գործունեությունը կազմակերպում և ղեկավարում է կազմակերպության նախագահը:

Կազմակերպության նախագահը՝

- ա) ղեկավարում և համակարգում է Կազմակերպության գործունեությունը;
- բ) առաջարկում և Կազմակերպության խորհրդի քննարկմանն է ներկայացնում Կազմակերպության կողմից նախատեսված ընդհանուր ծախսերը;
- գ) հրավիրում և վարում է Կազմակերպության խորհրդի և ընդհանուր ժողովի նիստերը, ստորագրում է այդ նիստում ընդունված որոշումները և արձանագրությունները;
- դ) ընդունում է որոշումներ, տալիս հրամաններ և կարգադրություններ;
- ե) ներկայացնում է Կազմակերպությունը Հայաստանի Հանրապետությունում և արտերկրում;
- զ) ներկայացնում է Կազմակերպությունը այլ կազմակերպությունների հետ փոխհարաբերություններում;
- է) Կազմակերպության անունից անում է հայտարարություններ;
- ը) Կազմակերպության գործունեության ուղղությունների վերաբերյալ առաջարկներ է ներկայացնում Կազմակերպության խորհրդի և Ընդհանուր ժողովի քննարկմանը և հաստատմանը;
- թ) իրականացնում է Կազմակերպության խորհրդի և Ընդհանուր ժողովի կողմից տրված այլ լիազորություններ:

Կազմակերպության նախագահը առանց լիազորագրի գործում է Կազմակերպության անունից, ներկայացնում Կազմակերպության շահերը և տնօրինում գույքը, ինչպես նաև ֆինանսական միջոցները, սույն կանոնադրությամբ սահմանված կարգով:

Կազմակերպության նախագահը կնքում է համաձայնագրեր և պայմանագրեր, այդ թվում նաև աշխատանքային, Կազմակերպության աշխատողների համար իրականացնում է գործատուի ֆունկցիաներ, բանկերում բացում է հաշիվներ:

Կազմակերպության նախագահի հիվանդության, մահվան կամ նրա պարտականությունների կատարումն անհնարին դարձնող այլ հանգամանքների առկայության դեպքում նրա պարտականություններն ու լիազորություններն իրականացնում է Կազմակերպության փոխնախագահը մինչև վերոհիշյալ հանգամանքների վերանալը: Հակառակ դեպքում հրավիրվում է ընդհանուր ժողովի արտահերթ նիստ՝ նոր նախագահի ընտրություններ անցկացնելու նպատակով:

Կազմակերպության ընթացիկ աշխատանքների իրականացման համար, Կազմակերպության Խորհուրդը կարող է հիմնել գործադիր տնօրենի հաստիք՝ իր որոշմամբ հաստատված լիազորություններով:

11. Կազմակերպության վերստուգիչ հանձնաժողովը

Կազմակերպության ղեկավար մարմինների գործունեության նկատմամբ վերահսկողությունն իրականացնում է Վերստուգիչ հանձնաժողովը: Վերստուգիչ հանձնաժողովն ունի երեք անդամ /այդ թվում նախագահը/ և ընտրվում է Ընդհանուր ժողովի կողմից երկու տարի ժամկետով:

Կազմակերպության նախագահը, Կազմակերպության Խորհրդի անդամները չեն կարող միաժամանակ նաև ընտրվել Վերստուգիչ հանձնաժողովի կազմում:

Վերստուգիչ հանձնաժողովը վերահսկում է ֆինանսա-տնտեսական գործունեությունը և կազմակերպության ղեկավար մարմինների որոշումների համապատասխանությունը սույն կանոնադրությանը:

Կազմակերպության ղեկավար մարմինների կողմից խախտումների գրանցման դեպքում Վերստուգիչ հանձնաժողովը իրավունք ունի հրավիրել ընդհանուր ժողովի արտահերթ նիստ, այդ մասին անդամներին տեղեկացնելով առնվազն երեք շաբաթ առաջ, և հարցը ներկայացնել ընդհանուր ժողովի ուշադրությանը:

Կազմակերպության գործունեության եւ գույքի օգտագործման վերաբերյալ հաշվետվությունները Ընդհանուր ժողովի հաստատմանն են ներկայացվում դրանց վերաբերյալ վերստուգիչ հանձնաժողովի եզրակացության հետ մեկտեղ: Վերստուգիչ հանձնաժողովը ներկայացնում է հաշվետվություն ընդհանուր ժողովին Կազմակերպության գործունեության արդյունքների, հաշվեկշռի, գույքի պահպանման և այլ տվյալների մասին:

Վերստուգիչ հանձնաժողովի որոշումներն ընդունվում են հանձնաժողովի անդամների ձայների պարզ մեծամասնությամբ: Վերստուգիչ հանձնաժողովի որոշումները ստորագրում է հանձնաժողովի նախագահը:

Կազմակերպության վերստուգիչ հանձնաժողովը իրավասու է՝

- 1) ցանկացած ժամանակ անցկացնել կազմակերպության ֆինանսատնտեսական գործունեության ստուգում.
- 2) ծանոթանալ կազմակերպության գործունեությանն առնչվող բոլոր փաստաթղթերին եւ սույն կանոնադրությամբ սահմանված կարգով պարտադիր քննարկման ենթակա առաջարկություններ ներկայացնել կազմակերպության մարմիններ.
- 3) կազմակերպության պաշտոնատար անձանցից, անդամներից ու աշխատողներից պահանջել եւ ստանալ գրավոր կամ բանավոր տեղեկատվություն.
- 4) իրականացնել կազմակերպության կանոնադրությունից կամ Ընդհանուր ժողովի որոշումներից բխող այլ լիազորություններ:

12. Կազմակերպության սեփականությունը, դրա գոյացման աղբյուրները և գոյացման կարգը

Կազմակերպությունը սեփականության իրավունքով կարող է ունենալ շենքեր, շինություններ, բնակարանային ֆոնդ, տրանսպորտային միջոցներ, սարքավորումներ, ծրագրային միջոցներ, դրամական միջոցներ (ՀՀ արժույթով ու արտարժույթով), բաժնետոմսեր, այլ արժեթղթեր և օրենքով չարգելված այլ գույք:

Կազմակերպության սեփականությունը գոյանում է անդամավճարներից, դրամաշնորհներից, նվիրատվություններից, սահմանված կարգով իրականացված գործունեությունից եւ օրենքով չարգելված այլ, այդ թվում՝ օտարերկրյա աղբյուրներից:

Կազմակերպության հիմնադիրների եւ անդամների՝ սեփականության իրավունքով կազմակերպությանը հանձնած, ինչպես նաեւ այլ աղբյուրներից ստացված գույքը կազմակերպության սեփականությունն է:

Կազմակերպությունը իրեն պատկանող գույքը տիրապետում, օգտագործում եւ տնօրինում է սույն կանոնադրությամբ սահմանված նպատակների իրականացման համար ու այդ նպատակներին համապատասխան՝ օրենքով եւ սույն կանոնադրությամբ սահմանված կարգով:

Կազմակերպության հիմնադիրներն ու անդամները կազմակերպությանը որպես սեփականություն հանձնած գույքի (ներառյալ՝ անդամավճարները) նկատմամբ իրավունքներ չունեն: Նրանք պատասխանատու չեն կազմակերպության պարտավորությունների, իսկ կազմակերպությունը՝ իր հիմնադիրների եւ անդամների պարտավորությունների համար:

Կազմակերպության գույքը չի կարող բաշխվել նրա հիմնադիրներին եւ անդամներին:

13. Կանոնադրության մեջ փոփոխություններ և (կամ) լրացումներ կատարելու կարգը

Սույն կանոնադրության մեջ փոփոխություններ կամ լրացումներ կատարելու նպատակով ընդհանուր ժողովը պետք է որոշում ընդունի ժողովին ներկա ձայների առնվազն 2/3-ով:

Կանոնադրության մեջ կատարված փոփոխությունները և լրացումները իրավաբանական ուժ են ստանում 33 պետական գրանցման մարմնում պետական գրանցման պահից:

14. Կազմակերպության առանձնացված ստորաբաժանումները

Կազմակերպությունը իր կանոնադրական նպատակները և խնդիրներն իրականացնելու նպատակով կարող է ստեղծել առանձնացված ստորաբաժանումներ, մասնաճյուղեր և ներկայացուցչություններ:

Ներկայացուցչությունը կազմակերպության գտնվելու վայրից դուրս գտնվող ստորաբաժանումն է, որը ներկայացնում է կազմակերպությունը և իրականացնում նրա շահերի պաշտպանությունը:

Մասնաճյուղը կազմակերպության գտնվելու վայրից դուրս գտնվող ստորաբաժանումն է, որը իրականացնում է կազմակերպության գործառույթները կամ դրանց մի մասը, ինչպես նաև իրականացնում է ներկայացուցչական գործառույթները:

Կազմակերպության առանձնացված ստորաբաժանումները իրավաբանական անձ չեն, կարող են ունենալ գույք, որը տրամադրվում է իրենց ստեղծող կազմակերպությունը, և գործում են սույն կանոնադրության հիման վրա:

Կազմակերպության առանձնացված ստորաբաժանումները ստեղծվում են կազմակերպության խորհրդի կողմից և գործում են վերջինիս կողմից հաստատված կանոնադրության շրջանակներում: Ներկայացուցչությունների և մասնաճյուղերի ղեկավարները նշանակվում են կազմակերպության նախագահի կողմից և գործում են նրա լիազորագրի հիման վրա:

15. Կազմակերպության վերակազմակերպումը

Կազմակերպության վերակազմակերպումը (միաձուլում, միացում, բաժանում, առանձնացում, վերակազմավորում) կատարվում է կազմակերպության ընդհանուր ժողովի որոշմամբ: Կազմակերպության վերակազմակերպումը դատական կարգով հնարավոր է միայն օրենքով նախատեսված դեպքերում եւ կարգով:

Կազմակերպությունը կարող է միաձուլվել այլ կազմակերպության (կազմակերպությունների) հետ:

Կազմակերպությունը կարող է միանալ այլ կազմակերպության:

Կազմակերպությանը կարող է (են) միանալ այլ կազմակերպություն (կազմակերպությունների):

Կազմակերպությունը կարող է բաժանվել այլ կազմակերպությունների:

Կազմակերպությունից կարող է (են) առանձնանալ կազմակերպություն (կազմակերպություններ):

Կազմակերպությունը կարող է վերակազմավորվել հասարակական միավորման որեւէ այլ կազմակերպական-իրավական տեսակի կամ հիմնադրամի:

16. Կազմակերպության լուծարումը

Կազմակերպության լուծարումը հանգեցնում է դրա դադարմանը՝ առանց իրավունքները և պարտականություններն իրավահաջորդության կարգով այլ անձանց անցնելու: Կազմակերպությունը համարվում է լուծարված, իսկ նրա գործունեությունը՝ դադարած, նրա գործունեության դադարման պետական գրանցման պահից:

Կազմակերպությունը կարող է կամավոր լուծարվել ընդհանուր ժողովի որոշմամբ: Կազմակերպության լուծարման մասին ընդհանուր ժողովի որոշումը պետք է ընդունվի ամբողջ ձայների առնվազն 2/3-ով:

Կազմակերպության հարկադիր լուծարման մասին որոշում կարող է ընդունել միայն դատարանը՝ պետական լիազորված մարմնի պահանջով եւ միայն օրենքով սահմանված հիմքերի առկայության դեպքում:

Կազմակերպությունը լուծարվում է նաեւ սնանկության հետեւանքով:


Կազմակերպության լուծարումն իրականացվում է իրավաբանական անձանց լուծարման՝ օրենքով սահմանված կարգով եւ պայմաններով:

Կազմակերպությունը լուծարվելու դեպքում պարտատերերի պահանջները բավարարելուց հետո մնացած գույքն ուղղվում է կազմակերպության կանոնադրությամբ նախատեսված նպատակներին, իսկ դրա անհնարինության դեպքում փոխանցվում է պետական բյուջե:

Կազմակերպության լուծարման մասին կազմակերպության ընդհանուր ժողովի որոշումը, կազմակերպության այլ մարմինների ու լուծարման հանձնաժողովի՝ լուծարման գործընթացին վերաբերող որոշումները, դրանք կայացնելուց հետո՝ տասնօրյա ժամկետում, դատարան բողոքարկելու իրավունք ունի կազմակերպության ցանկացած անդամ: Այդ դեպքում դատարանը կարող է իր որոշմամբ կասեցնել վիճարկվող որոշման կատարման ընթացքը՝ մինչեւ գործի դատական քննության ավարտը:

Կազմակերպության լուծարման պետական գրանցումն իրականացվում է իրավաբանական անձանց լուծարման պետական գրանցման համար օրենքով սահմանված կարգով:

«Տեղեկատվական համակարգերի զարգացման և
վերապատրաստման կենտրոն» հասարակական
կազմակերպության
խորհրդանիշը



Խորհրդանիշի նկարագիրը.

Շրջանի մեջ պատկերված են միևնույն առանցքի վրա տեղադրված 3 զուգահեռ սկավառակներ (որոնք հիշեցնում են տեղեկատվության կուտակիչներ), որոնց առանցքում միասին պատկերված են լատիներեն «I» և «S» տառերը՝ կազմակերպության անգլերեն լեզվով անվանման առաջին և երկրորդ բառերի սկզբնատառերը: Շրջանագծի մեջ շրջանաձև պատկերված է “Information Systems Development and Training Center” անգլերեն անվանումը, իսկ “Center” և “Information” բառերի բաժանման մասում պատկերված է սլաքավոր գալար: